ԿԱՐԾԻՔ

Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցող

Դավիթ Ռոմիկի Մոսինյանի՝

«Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծություն» ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունում քննարկվում են արդի հայ պատմագիտության համար շատ կարևոր մեթոդաբանական նշանակություն ունեցող պատմության փիլիսոփայական հայեցակերպերը: Ատենախոսն անդրադառնում է հիմնախնդրի ակունքներին, տեսամեթոդաբանական իմաստավորումներին, ցուցաբերում է հեղինակային մոտեցում հետազոտական նյութի քննարկման ժամանակ: Մեզանում պատմության փիլիսոփայական իմաստավորման փորձերի սակավությունը պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում դիտարկվում է պատմության գոյաբանական հայեցակերպը, ներկայացվում են պատմության ենթակայի ակտիվ և պասիվ հոլովույթները:

Երկրորդ գլուխը նվիրված է պատմության իմացաբանական հայեցակերպի յուրահատկությունների վերլուծությանը: Ատենախոսը միանգամայն իրավացիորեն կասկածի տակ է դնում պատմության «օբյեկտիվ» ճանաչումը, հետազոտողների ուշադրությունը հրավիրում հասկացման մեթոդաբանական կարևորության վրա:

Երրորդ գլուխը հաջողված փորձ է պատմության տրամաբանական և բարոյագիտական հայեցակերպերը համադրելու և դիտարկելու միասնության մեջ:

Նման համդրման մեթոդաբանական կիզակետը պատմության իմաստի գաղափարն է։ Իմաստի միջոցով է հնարավոր դառնում պատմության ամբողջական պատկերի կառուցումը։

Չորրորդ գլխում դիտարկվում է պատմության քաղաքագիտական հայեցակերպի կենտրոնական թեմա ներկայացվող համաշխարհային պատմության հնարավորության հիմնահարցը։ Արևմուտքի և Արևելքի պատմության միասնական դիտարկմամբ հնարավոր է կարևոր գործիքներ մշակել նաև Հայոց պատմության փիլիսոփայական իմաստավորումների համար։

Ատենախոսությունը կատարված է բարեխղճորեն և գրագետ, հատկապես արժեքավոր ենք համարում հեղինակի կողմից կիրառված մոտեցումները։ Ատենախոսության մեթոդաբանական առանձնահատկությունն այն է, որ ատենախոսը իրականացրել է համալիր փիլիսոփայական հետազոտություն։ Քննադատական, պատմահամեմատական, հերմենևտիկական և ֆենոմենոլոգիական մեթոդների համալիր կիրառումը հնարավորություն է տալիս վերլուծել պատմության փիլիսոփայական հայեցակերպերը մեթոդաբանական բարեխճության և գիտական հիմնավորվածության պատշաճ մակարդակում։

Ուսումնասիրելով հարուստ տեսական նյութ՝ հեղինակը փաստարկում է, որ պատմագրությունը շարունակաբար աշխարհակարգի վերափոխումներից բխող նոր մոտեցումներ և մեթոդներ է պահանջում։ Շատ արդիական է այդ միտքը հատկապես ՀՀ կրթության ոլորտում իրականացվող պետական քաղաքականության տեսամեթոդական հիմքերը վերանայելու անհրաժեշտության համատեքստում։

Ատենախոսության գիտական դրույթները և եզրահանգումները մեթոդապես հիմնավորված են և մանրակրկիտ ձևով հետևողականորեն փաստարկված։ Ատենախոսության գիտական արժեքը կարևորվում է ոչ միայն դուրս բերված եզրահանգումների հիմնավորվածության և հուսալիության տեսակետից, այլ նաև մեծածավալ նյութի մշակվածության առումով։ Հեղինակն իրեն հասու լեզուներով

հրատարակված մեծածավալ գրականություն է ուսումնասիրել և ենթարկել վերլուծության։ Ատենախոսի ստացած գիտական արդյունքների հիմնավորվածությունն ու հուսալիությունը հաստատում է տարաբնույթ գիտական աշխատությունների, հայտնի փիլիսոփաների մեթոդաբանական մոտեցումների օգտագործումը։

Ատենախոսը փաստարկում է այն տեսակետը, որ պատմագրության հնարավորության հարցին իբրև պատասխան ձևավորված բոլոր ուսմունքներն էլ մի կողմից հիմնավոր են, մյուս կողմից՝ խոցելի։ Հատկապես խոցելի է մեկընդմիշտ տրված «օբյեկտիվիստական» պատմագրությունը։ Դրանով ատենախոսության հեղինակը մեթոդաբանական ուղեցույց է տալիս ժամանակակից հայ պատմագետներին։ Պատմագրությունը շարունակաբար վերակառուցել է պետք։

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է տեսական և կիրառական բնույթի հետևյալ արդյունքներով՝

Ատենախոսության մեջ համակողմանի ներկայացված են պատմության փիլիսոփայական հայեցակերպերի առանձնահատկությունները մեկ միասնական մեթոդաբանական հետազոտական տիրույթում։ Դա մեթոդաբանական նոր հնարավորություն է ստեղծում հիմնախնդրի հետագա ուսումնասիրությունների համար։

Շատ արժեքավոր է հեղինակի կողմից կիրառված համակարգային մեթոդի միջոցով իրականացված պատմության փիլիսոփայական հայեցակերպերի տիպաբանումը՝ գոյաբանական, իմացաբանական, տրամաբանաբարոյագիտական, քաղաքագիտական հայեցակերպեր։

Հեղինակին հաջողվել է որպես ատենախոսական հետազոտությունից ածանցյալ հետևություն ցույց տալ, որ հայ պատմագրությունը ցայսօր մեծապես առաջնորդվում է պատմագրության խոցելի հարացույցի մեթոդաբանությամբ։ Այդ հարացույցի

փոփոխությունը կստեղծի հնարավորություն գործնականում խուսափել իրադարձութենակենտրոն պատմությունից։

Հեղինակի ստացած արդյունքների ուսուցողական նշանակությունն այն է, որ ատենախոսությունը կարող է կիրառվել որպես դասախոսական նյութ բուհերում փիլիսոփաների, պատմաբանների, հումանիտար ոլորտի մասնագետների պատրաստման համար։

Ատենախոսական աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից՝

՝Ատենախոսության չորրորդ գլխում նույնացված են քաղաքագիտական և սոցիալ-փիլիսոփայական մոտեցումները։ Սակայն այդ տրամաբանական հասկացությունների ծավալները չեն համընկնում։ Իմաստային տարբերություն կա նաև բովանդակության առումով։

՝Որպես եզրակացություններ ամփոփված ատենախոսական հետազոտության առաջին և երկրորդ նշված արդյունքները /էջ 244/՝ պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծությունն ու այդ հայեցակերպերի բացահայտումն ու որոշարկումն ըստ էության նույն բանն են։

՝Հեղինակը խնդիր է դնում դասակարգել պատմության փիլիսոփայական հայեցակերպերից բխող խնդիրները /էջ 11/, այնինչ դասակարգման մեթոդական հնարքը բնորոշ է բնագիտությանը, հումանիտար հետազոտություններում կիրառելի է տիպաբանումը։

Նշված թերությունները չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը, այլ առաջարկություններ են հեղինակի հետագա հետազոտական աշխատանքների համար։ Կարելի է պնդել, որ այս դոկտորական ատենախոսությունը էական ներդրում է փիլիսոփայության բնագավառում, այն մեթոդաբանորոն հիմնավորված է և ունի մեծ նշանակություն հայրենի պատմագիտության համար։ Ընդհանուր առմամբ այն կարող է գնահատվել որպես նոր գիտական հիմնախնդրի առաջադրում և լուծում։

Ատենախոսի կողմից հրատարակված աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հեղինակի հիմնական ձեռքբերումները:

Եզրակացություն

Դ.Ռ.Մոսինյանի «Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծություն» Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որը վերաբերում է տեսամեթոդաբանական և գործնական առումով արդիական թեմայի: Դոկտորական ատենախոսությունը բավարարում է Հայաստանի հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման սահմանված պահանջներին, այն ամբողջական և արդիական գիտական աշխատանք է:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ ատենախոսության հեղինակ Դավիթ Ռոմիկի Մոսինյանը արժանի է Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա.Ե.Մկրտիչյան

«Ա.Ե.Մկրտիչյանի ստորագրությունը հաստատում եմ» :

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան

20.10.2024